

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Կ. Մինասյան
,, 01 ,, 2019թ.

Քննարկված է մանկավարժական
խորհրդի 30.08.19 թիվ 08-19 նիստում



ՀՀ ԿԳՆ «ԸՆՏԱՆԻՔ» ՄՊՍ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ-Ի ՍՈՎՈՐՈՂԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Կենտրոնում սովորողներն ու իրենց Օրինական ներկայացուցիչները ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանված են օրենքով:

1. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենտրոնի սովորողների իրավունքները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ համապատասխան, կենտրոնի կանոնադրությամբ, կենտրոնի և սանի Օրինական ներկայացուցչի միջև կնքվող արտադպրոցական կրթության ծառայությունների մատուցման, ինչպես նաև սովորողների ներքին կարգապահական կանոններով:

1.1 Սովորողն իրավունք ունի՝

- ստանալու անվճար արտադպրոցական կրթություն,
- Օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ընտրելու մասագիտություն,
- անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից,
- մասնակցելու իրականացվող տարաբնույթ միջոցառումներին,
- պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումներից, մանկավարժական և այլ Աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,
- ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,
- օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից,
- հաճախել մեկից ավելի խմբակ,
- խմբից խումբ տեղափոխվել,
- ուսումնական ծրագրի վատ յուրացման կամ ցանկության դեպքում կրկնել ուսումնական ծրագիրը:

1.2. Սովորողը պարտավոր է՝

- կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,
- կենտրոնում ստանալ ուսումնական ծրագրերով նախատեսված բավարար գիտելիքներ և կատարելագործել մասնագիտական հմտությունները,

Սովորողների համար կենտրոնի կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, պատվոգիր, դիպլոմ, գովասանագիր կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

2. ՍՈՎՈՐՈՂԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Սովորողի Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝

- պաշտպանելու իր և իր երեխայի շահերը համապատասխան մարմիններում,
- մասնակցելու ուսումնական ծրագրերի արդյունավետության գնահատման գործընթացին,
- մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը,
- մասնակցելու կենտրոնի կրթադաստիարակչական գործընթացին,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.2 Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝

- մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքները բավարարելու համար,
- հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորությունների նկատմամբ,
- դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ,
- դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական Աշխատողների նկատմամբ,
- սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն,
- հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը,
- սովորողին զերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմետ նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

3. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կարգապահական կանոններում փոփոխությունները կատարվում են գրավոր: Տնօրենը, տնօրենի տեղակալները կամ ավագ մանկավարժը սաներին պարտավոր են ծանոթացնել փոփոխություններին՝ փակցնելով դրանք տեսանելի վայրում: